[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
24	Հոկտեմբեր	2016 թ.		Բ	4062423409
[4] Մատուցման ամսաթիվը					
22	Հոկտեմբեր	2016 թ.		Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի		
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 0 8 6 0 6 2 1	
[9] Անվանումը	«ՄԵԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)	
[10] Բանկային տվյալները	«Առեկսիմբանկ - Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ	N 23800-30641320100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԱՎԱՆ ԱՃԱՌՅԱՆ Փ. 31	
[12] Լրացուցիչ տվյալներ	ԳԱՌՆԻ Գ. Զոհրապի 30	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի			
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 0 0 1 8 3 5 7		
[14] Անվանումը	ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)		
[15] Բանկային տվյալները		N	
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 10		
[17] Լրացուցիչ տվյալներ			
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

27/10 16թ.

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՃԱՇԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ (100 անձի համար)	փաթ	1	1727800	1727800
Ընդամենը					1727800

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ NIKOGHOSYAN ARTUR 3414800144

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

24/10/2016 15:46:08

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 20/16

Ծառայությունների վճարովի մատուցման մասին

ք. Երևան « 20 » հոկտեմբերի 2016թ.

«ՍԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Նիկողոսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մի կողմից, և Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Հակոբյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու» մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին ծառայությունների վճարովի մատուցման մասին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված ծառայությունների արդյունքները և վճարել Կատարողին դրանց դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով և չափով:

1.2 Պայմանագրով Կատարողը պարտավորվում է 2016 թվականի հոկտեմբերի 22-ին իրականացնել «ՀՀ Սահմանադրական դատարան» միջազգային սեմինարի մասնակիցների ճաշի կազմակերպման ծառայությունները, նախատեսված 100 (մեկ հարյուր) անձի համար, (այսուհետ «Ծառայություն»):

1.3 Սույն պայմանագրի առարկա հանդիսացող մատուցված Ծառայությունների հանձնում-ընդունումը ձևակերպվում է երկկողմանի ստորագրվող (կնքվող) հանձնման-ընդունման ակտով և հարկային հաշվով:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1 Կատարողին տրամադրել ծառայությունների մատուցման համար ելակետային նյութերը և տեխնիկական առաջադրանքը,

2.1.2 Կատարողին վճարել մատուցված Ծառայությունների դիմաց, սույն պայմանագրով սահմանված չափով և պայմաններով,

2.1.3 Սույն պայմանագիրն իր նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու դեպքում Կատարողին վճարել մինչև լուծման պահանջը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից մատուցված ծառայությունների դիմաց:

2.2 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից իր պարտավորությունների կատարումը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.2.2 Կատարողից պահանջել Ծառայությունները մատուցել սույն պայմանագրով սահմանված ժամկետներում, պատշաճ որակով և ամբողջ ծավալով:

2.3 Կատարողն պարտավոր է՝

2.3.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով և ժամկետներում,

2.3.2 Ծառայությունների մատուցումը իրականացնել սույն պայմանագրի 1.2. կետում նշված օրը՝ 2016 թվականի հոկտեմբերի 22-ին, իսկ Ծառայությունների մատուցման վերաբերյալ հանձնան-ընդունման ակտը և հաշիվը Պատվիրատուին հանձնել միջացառման ավարտից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4 Կատարողը իրավունք ունի.

2.4.1 Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները,

2.4.2 Ստանալ վարձատրություն մատուցվող (մատուցված) Ծառայությունների դիմաց սույն պայմանագրով սահմանված չափով և պայմաններով:

2.4.3 Պատվիրատուի կողմից պայմանագրի վաղաժամկետ լուծելու առաջարկ ստանալու դեպքում, պահանջել վճարել մինչև լուծման պահանջը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից մատուցված ծառայությունների դիմաց:

3 Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.727.800 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուն, սույն պայմանագրի 3.1. կետում նշված ամբողջ գումարը, պարտավորվում է Կատարողին վճարել վերջինիս կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների լիակատար կատարումից հետո, ներկայացված հանձնման-ընդունման ակտի և հարկային հաշվի հիման վրա՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

3.3. Սույն Պայմանագրով բոլոր վճարումները կատարվում են Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4 Ծառայությունների հանձնման – ընդունման կարգը

4.1 Մատուցված Ծառայությունների արդյունքների հանձնմանը պատրաստ լինելու մասին Կատարողի կողմից գրավոր հաղորդագրությունը ստացած Պատվիրատուն պարտավոր է անմիջապես անցնել այն ընդունելուն:

4.2 Կատարողի կողմից Ծառայությունների արդյունքի հանձնումը և Պատվիրատուի կողմից դրա ընդունումը ձևակերպում են հանձնման-ընդունման ակտով, որը ստորագրվում է Կողմերի կամ նրանց լիազորված անձանց կողմից:

4.3 Պատվիրատուն Ծառայությունների հանձնման-ընդունման ակտը ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է Կատարողին ուղարկել հանձնման-ընդունման ստորագրված ակտը կամ հանձնման-ընդունման ակտը չստորագրելու պատճառաբանված գրություն՝ նշելով մատուցված ծառայությունների թերությունները և(կամ) անհամապատասխանությունները:

4.4 Այն դեպքում, եթե Պատվիրատուն, սույն պայմանագրի 4.3. կետով սահմանված ժամկետում Կատարողին չի ներկայացնում Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի չստորագրելու պատճառաբանված գրությունը, ապա Ծառայությունները համարվում են Կատարողի կողմից հանձնված, իսկ Պատվիրատուի կողմից ընդունված:

5 Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.2 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական կամ մասնակի չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդպիսի չկատարումը պայմանավորված է անհաղթահարելի ուժի ազդեցությամբ (ֆորս-մաժոր), որը ծագել է պայմանագրի կնքումից հետո և, որը Կողմերը չէին կարող կանխարգելել կամ կանխատեսել:

6 Եզրափակիչ դրույթներ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից ստանձնած պարտավորությունների լիակատար կատարումը:

6.2 Սույն պայմանագրի առարկային վերաբերող և դրանից բխող բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում, վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3 Պայմանագրով չկարգավորվող հարցերը կարգավորվում և մեկնաբանվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

6.4 Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն կամ լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր ձևով և ստորագրված է Կողմերի կամ լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.5 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

7 Կողմերի իրավաբանական հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	***Կատարող***
ՀՀ Սահմանադրական դատարան	«ՍԵԼ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 10	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աճարյան 31
ՀՎՀՀ 00028357	ՀՎՀՀ 00860621
ՖՆ աշխատակազմի գործ. վարչություն	«Առեկսիմբանկ - Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
h/h 900011179083	h/h 23800-30641320100
Աշխատակազմի ղեկավար՝ **Ա. Հաբոկյան**	Տնօրեն **Ա. Նիկողոսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)